

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի խմբագրություն:

1966 թ. հունիսին հրատարակված իմ «Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» խորագրով աշխատության վերջնական խմբագրությանը, սրբագրությանը, ինչպես և տպագրությանը հարմարեցնելու համար վայելչագրի կողմից մի քանի քարտեզների արտագրության վերանայմանը ես հնարավորություն չեմ ունեցել անձամբ մասնակցելու, որովհետև համարյա լրիվ կուրացել էի: Սակայն, բարեբախտաբար, բուժվելուց հետո վերականգնվեց տեսողությունս, և ես վերջնական խմբագրությունից և սրբագրությունից հետո առաջին անգամ հնարավորություն ունեցա կարգալու արգեն հրատարակված գիրքս:

Ես շափազանց վշտացած եմ, որ վատառողջ լինելու պատճառով չեմ կարողացել անձամբ հետևելու տպագրության ընթացքին, ուստի թե՛ առանձին քարտեզներում և թե՛ տեքստում կան էական վրիպումներ ու բացթողումներ, որոնց զգալի մասը սրբագրական-խմբագրական բնույթի է:

Այս նախաբանից հետո անշափ խնդրում եմ տպագրել գրքիս մասին իմ մի քանի կարևոր ուղղում-գիտողություններ:

Սկսենք քարտեզներից:

1) Օժանդակ բայի ներկան ներկայացնող քարտեզի օրինակներում առաջին և երկրորդ շրջանակները չեն լրացված, դրանցից առաջինը պետք է լինի ամբողջապես սև, երկրորդը՝ ձախից կեսը սև:

2) № 1 քարտեզում № 160 գյուղը պետք է լինի օրինակներում խառն ձևերի համար եղած նշանով:

3) «Բայերն ըստ խոնարհիչների» քարտեզում Հայկական ՍՍՀ-ի Դորիսից վերցրած բնակավայրերի շրջանակները պիտի լրիվ սև լինեն:

4) «Բարբառային խմբավորումներ» քարտեզի № № 21, 81, 82, 87 գյուղերը պիտի լինեն օրինակների երկրորդ նշանով:

5) ա > օ, օ, օ, օ ներկայացնող քարտեզի օրինակների նշանների դիմաց եղած ա պիտի լինի օ:

6) № 8 քարտեզում № № 142, 146, 147, 152 գյուղերի շրջանակները չեն լրացված, դրանք հարևան գյուղերի նշաններով պիտի լինեն:

Գրքի տեքստային մասերում խմբագրական-սրբագրական վրիպումներից և այլ թերություններից նշենք ավելի էականները, որոնք որակ են կազմում:

1) էջ 51-ում ճօղնր բառի սյունակում տպված է 1, 2, 5, 7, 24—27 և այլն, պիտի լինի՝ 1, 2, 5, 7—21, 24—27 և այլն:

2) էջ 53-ի ներքևից՝ երրորդ տողից (չհաշված տողատակինը) կարդալ հետևյալ կետադրությամբ. պարակ, պաց (հիմնականում Մարտակերտի շրջանի գյուղերում, № 4-ում՝ պարակ'), պէն, պէրակ, պէց (մնացածներում) եղբայր > ախպէր, թուղբ > թօխպ և այլն:

Առհասարակ կետադրության անտեղի փոփոխություններ կան և այլ տեղերում, օրինակ՝ էջ 108-ում բնագրում եղել է՝ Սեռ.— ճօղէ (ն), Մարտակերտից

մի քանի տեղ հօդի(ն) և այլն, բայց տպվել է՝ Սեռ.— հօդէ(ն)—Մարտակերտից մի քանի տեղ, հօդի(ն) և այլն:

3) էջ 63-ում՝ վերևից շորրորդ տողում կնանկի՝ բառաձևը Մարտակերտի մեծ մասի համար է նշված, բայց այդ ձևով ասվում է միայն այն դյուղերում, որոնք այդ բառի համար ցույց են տրված 90-րդ էջում: 63-րդում նշված է նաև մէջկ, որ նույնպես շատ քիչ տեղերում է (հյուսիս-արևելքից) գործածական. մեծ մասում՝ մաշկ:

4) 80-րդ էջի երրորդ պարբերությունում նշված է, թե կանանց անունները այդպես չեն կրճատվում. պետք է լինի՝ կանանց անուններն էլ այդպես են կրճատվում, օրինակ՝ Կատի<Եկատերինե, Դյուլը<Դյուլիզար, Զառի<Զառնիշան կամ Զարվարդ, Սապլետ<Եղիսաբեթ, Հէղի<Հեղինե, Արագ<այ Թագուհի և այլն:

5) 83-րդ էջի երկրորդ պարբերությունը սկսվում է «Բոլոր տեղերումն էլ բարդությունների մեջ արմատների ձայնավորները պահվում են անփոփոխ», պետք է ավելացնել, որ շեշտի տեղափոխման կապակցությամբ նախաշեշտ ձայնավորի սղման ժամանակ հոգակապը կամ հաջորդ բաղադրիչի առաջին ձայնավորը կրում է սղված ձայնավորի երանգի ազդեցությունը:

6) 89—90 էջերում էնի/էնէ հոգնակների մասին խոսելիս՝ այդ տարբերակների տարածման տեղերը ճիշտ չենք տվել. —էնէ (գյուլբէնէ, վրգրէնէ...) և —էնի (գյուլբէնի...) տարածման տեղերը նույնն են, ինչ ասված է նէ և նի հոգնակների մասին (էջ 87, 88):

7) Անցյալ անկատարի խոնարհումից (էջ 158—159) դուրս է մնացել Մեհ-տիշենի (№ 79) ձևը, որը լինում է ք'ընում ք'ընմ/(ք'ընամ)ի,ի,էր,ինք'ի,ք'ի, ին, իսկ այդ ճյուղի ներկա ժամանակի տպված բայաձևից (էջ 156, կ. 4) առաջ նախ պիտի լինի ք'ընում ք'ընմ, որոնք ավելի սովորական են այդ գյուղում:

8) Թեև այլ առիթներով նշված է, բայց անցյալ կատարյալի տակ բաց է թողնված մի կարևոր երևույթ, որ և խոնարհման կանոնավոր բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը Մարտակերտի համարյա բոլոր գյուղերում (չհաշված № № 3, 4, 6, մասամբ 24, 35) և Ստեփանակերտի հյուսիսից մի քանի տեղերում (№ № 70, 62 և այլն) վերջանում է էց-ով (թրխէց, կօտրէց, սարքէց...), իսկ Ստեփանակերտի գյուղերի մեծ մասում (մանավանդ Կարկառ-չալից հարավ), Մարտունու, Շուշվա բոլոր և Հաղրութի գյուղերի մեծ մասում (ուր պարզ ձևով է կազմվում) վերջանում է -ից-ով (թրխից, կօտրից, սարքից): Առաջին խմբի գյուղերում -ից լինում է միայն ի խոնարհման ժամանակ (մաշից, հալից, քրցից), իսկ երկրորդ խմբում և և ի խոնարհումների ժամանակ միատեսակ է եզակի երրորդ դեմքը՝ -ից:

Մարտակերտի հյուսիս-արևելքից եզակի գյուղերում, Ստեփանակերտից № № 81, 82-ում այդ դեմքը սովորաբար վերջանում է էց-ով, նաև ի խոնարհման դեպքում:

9) 196-րդ էջի առաջին սյունակում ք'իճիյիս դերբայի տակ 21 անգամ տպված է ք'իճի, բայց պիտի լինի առաջին ձևով՝ ք'իճիյիս: Բնագրում առաջին բառից հետո չակերտներ եմ դրել, բայց չակերտների փոխարեն 21 անգամ բառի կեսն են տպել, և ոչ մի սրբագրիչ այդ թերությունը չի նկատել: Այս և հաջորդ էջում խոնարհվող ինիլ բայի առանձին ձևեր ես տվել եմ նաև սկզբից ու-ով կամ ը-ով սկսվող ձևերով (ունում, ընական/ըննական, ըյալ), բայց ավելի սովորական են սկզբից ի-ով ձևերը, ինչպես՝ կ'իբիլիս/կիբիլիս, կիբիս

ըմ ինում, ինական իննական, ինիլու, իլած և ալլն: Առհասարակ նախաշեշտ ի. ու հնչյունները մեծ մասամբ մնում են:

10) Քննել բայը Ղարաբաղի, Հաղրութի, Շաղախ-Խծաբերդի բարբառներում սովորաբար հարադրությամբ է ասվում՝ քօն ինիլ, քօն րն ինում ունում և այլն, բայց 218-րդ էջի երկրորդ կետի օրինակները բարբառների հիմնական մասի համար հարադատորեն չեն տվել, թեև այլ տեղերում և բառարանում ճիշտ են: Բառարանում կտրվեցին, որ պիտի լինի քօն ալլն:

11) էջ 234-ում տպված է. «Ում ճյուղի Ղարաբաղի բարբառի հատկանիշները ավելի խտացած են եղել Լեոնային Ղարաբաղի հատվածում»: Պետք է տպվեր՝ Լեոնային Ղարաբաղի հյուսիսային և միջին հատվածներում:

12) Տեղ են գտել ուղղագրական թերություններ, օրինակ՝ ծօյն «ծունկ» տպվել է ծօղնը (էջ 385), հըլէվուր՝ հըլէվար (406), անէմ էր, անիմ էր՝ անէմ էմ էր, անիմ իմ էր (317), մըւս, կարպէտ՝ մըւր, կարպըտ (116), հլ՝ հ (17, կ. 12), բարբառներում՝ բառերում (81), (դ)՝ (ը) (22), սեռական իմոյ՝ իմում (138) ըսէլիս, կ'իբիլիս՝ ասէլիս, կ'իբիլիս (146), էթաս էս էր՝ էթաս էր էր (159) անցյալ անկատարի՝ անց, կատարյալի (157), ք'իս ըմ լալ ընիս՝ ք'իս ըմ լալ ք'ընիս, ինիլ լալ՝ ըլիլ լալ (197), խօզէլ՝ խուզէլ (376) 7-րդ ս.), հավին՝ հաշվին (502) և այլն: Անիւոյթ է կազմվել և ցանկը, ուր գոյականի տակ են մտել խոսքի բոլոր մասերը, նույնիսկ շարահյուսությունը, բաց են թողնվել վերնագրեր:

13) Բառարանը ընդգրկել է տեղիս բարբառներում եղած՝ գրաբարից ավանդված բառերի մի մասը միայն. նպատակ չենք ունեցել ներկայացնելու բարբառներում եղած բոլոր գրաբարյան բառերն ու ոճերը, որոնք բաղմաթիվ են, մանավանդ Ղարաբաղի բարբառում: Տրված բառարանում չեն մտել նաև գրքում եղած նմուշների և օրինակների բոլոր բառերը, ինչպես՝ ընդ այս>տէս, ընդ այն>տէն (Մարաղայում, Չայլուններում, Մեհտիշենում՝ դէս, դէն), ընդ վայր, ընդ վեր>տըվէր, տըլէր (Ղարաբաղի, Հաղրութի), ընդ ուր (գրքում սխալմամբ տպված է ընդ որ) >ընդ հօր> (ըն)տ հօր>թօր, այնր>էնգուր//անդուր, անդօր, բերդ>պէրթ, եռալ>հէո կ'ալ, շոհ>շուհ, շուհավ, հանգ-չիլ>հանդիլ, դեո>տէո հալա, գտանել>քըթանալ//քթէնալ, ուզել>օդիլ, ոգև-վորել>հի՝քի՝վէրիլ, թափահարել>թըփըհարէլ, թըփըհարիլ, տապան>տապան, մոնչալ>մըոունչ-մըոունչ կ'ալ, լավ մարդի>լիվի՝ մարթի և այլն:

Երբեմն որոշ բառերի բարբառային բոլոր ձևերը կամ իմաստները չեն տրված, օրինակ՝ գիծ կիծ կ'իծ, բայց Ղարաբաղի, Հաղրութի բարբառներում շատ գործածական է մի այլ համանիշ՝ պլլէլ, որը չենք տվել բառարանում, կամ գառ բառի դիմաց գրել ենք՝ 1. գյուռ «հորդ» (անձրև), պիտի լիներ և «ուծեղ, բորբոքուն» (գյուռ կրակ) և այլն:

Սակայն ես ուզում եմ նշել բառարանի մի էական բաց՝ Ղարաբաղի բուն բարբառի սյունակում եղած ե և ի խոնարհման բայերի կապակցությամբ: Ղարաբաղի բուն բարբառում ես վերցրել եմ Մարտակերտի հյուսիս-արևելքից մի քանի գյուղ (№ № 8, 10, 14), որոնցում, մանավանդ 8—10-ում ի խոնարհման քիչ բայեր կան, ըստ որում այդ բայերն էլ ոչ քիչ դեպքերում ե խոնարհմամբ են ասվում, ես այդ բայերը Ղարաբաղի բուն բարբառի սյունակում սկզբից եմ գրել (հյուսիսից-հարավ սկզբունքով), բայց վերցրել փակագծում կամ կողքին գրել էի «քիչ պատահող, հազվագեպ», այսինքն Ղարաբաղի բուն բարբառին ոչ հատուկ, ապա տվել Ղարաբաղի բուն բարբառին հատուկ ձևը:

Խմբագրելիս «թիշ, հաղվադեպ» բառերը հանել են, և Ղարաբաղի բուն բարբառի սյունակում որոշ բայեր մնացել են ևրկու ձևով, հաճախ առաջին՝ հաղվադեպ ձևը փակագծում էլ չի դրված, ինչպես՝ (հրմանչէլ), հրմանչիլ, պիրէլ, պիրիլ և այլն:

Այսպիսի դեպքերում միշտ երկրորդը՝ ի խոնարհման ձևը պիտի հիմնականը. սովորականը համարել Ղարաբաղի բուն բարբառի համար:

Կ. Ս. ԴԱՎԻԹՅԱՆ,

(Ստեփանակերտ)